ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 10

11 մարտի 2025 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 03 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը, Հրայր Ասատրյանը :

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված **«Գումար հատկացնելու մասին»** նախագիծը՝ Խոյ համայնքի 2025 թվականի մարտի 13-ի ավագանու արտահերթ նիստում :

Նիստում քննարկվեց 2025 թվականի մարտի 8-ից /կանանց միջազգային օր/ մինչև ապրիլի 7-ն /մայրության և գեղեցկության տոն/ ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 17 գյուղերի բնակիչ համարվող ծերության թոշակառու կանանց նվերներ, դպոցների աշխատակազմին, համայնքապետարանի աշխատակազմին, համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկի աշխատակազմին հյուրասիրության, Խոյ համայնքի ավագանու նիստերի դահլիճի համար գույք ձեռք բերելու , «Հայթաղի Հ.Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին դպրոցի հանդիսությունների դահլիճի համար 90 հատ աթոռ ձեռք բերելու , «Այգեշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին աշակերտական երկտեղանոց սեղան-աթոռ ձեռք բերելու համար գումարներ հատկացնելու մասին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. 2025 թվականի մարտի 8-ից /կանանց միջազգային օր/ մինչև ապրիլի 7-ն /մայրության և գեղեցկության տոն/ ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 17 գյուղերի բնակիչ համարվող ծերության թոշակառու կանանց նվերներ, դպոցների աշխատակազմին, համայնքապետարանի աշխատակազմին, համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկի աշխատակազմին հյուրասիրության համար հատկացնել 8 500 000 /ութ միլիոն հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումար:
2. Խոյ համայնքի ավագանու նիստերի դահլիճի համար գույք ձեռք բերելու համար տրամադրել 3 500 000 /երեք միլիոն հինգ հարյուր /ՀՀ դրամ գումար:
3. «Հայթաղի Հ.Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրել 990 000 /ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ գումար՝ դպրոցի հանդիսությունների դահլիճի համար 90 հատ աթոռ ձեռք բերելու համար :
4. «Այգեշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրել 481 000 /չորս հարյուր ութսունմեկ հազար/ՀՀ դրամ գումար ՝ աշակերտական երկտեղանոց սեղան-աթոռ ձեռք բերելու համար:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝		ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝		ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ
		ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ